ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

« 12 » հոկտեմբեր 2016 թ. No 3088 – Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 5-Ի ԹԻՎ 3024 – Ա ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի օգոստոսի 15-ի N 1300-Ն որոշման հավելված 1-ով հաստատված Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կանոնադրության 12-րդ կետի «դ» ենթակետը,

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1.Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2016 թվականի հոկտեմբերի 5-ի «Հայաստանի Հանրապետության առողջապահության համակարգի առանձին ոլորտների գործունեության ուսումնասիրության եվ բարելավման նպատակով հանձնաժողովներ ստեղծելու մասին» թիվ N 3024–Ա հրամանը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

ԼԵՎՈՆ ԱԼԹՈՒՆՅԱՆ

Հավելված
ՀՀ առողջապահության նախարարի 2016 թվականի
հոկտեմբերի 12-ի N 3088-Ա հրամանի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

«05» հոկտեմբերի 2016թ. No 3024 – Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՌԱՆՁԻՆ ՈԼՈՐՏՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության նախագահի 2007 թվականի հուլիսի 18-ի թիվ ՆՀ-174-Ն հրամանագրի հավելվածի 136-րդ կետի 12-րդ ենթակետը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի օգոստոսի 15-ի N 1300-Ն որոշման հավելված 1-ով հաստատված Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կանոնադրության 12-րդ կետի «դ» ենթակետը, Հայաստանի Հանրապետության առողջապահության համակարգի առանձին ոլորտների գործունեության բարելավման և արդյունավետության բարձրացման նպատակով առաջարկություններ մշակելու նպատակով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1.Ստեղծել՝

1) առողջապահության նախարարության և նախարարության համակարգի մեջ ընդգրկված հիմնարկների և կազմակերպությունների գործունեության օպտիմալացման, կազմակերպակառուցվածքային բարեփոխումներ իրականացնելու նպատակով առաջարկներ մշակող հանձնաժողով,

2) առողջապահության նախարարության աշխատակազմի, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հանրապետական գիտաբժշկական գրադարան» պետական ոչ առևտրային կազմակերպության, առողջապահական պետական նպատակային ծրագրերի ու դրանց բյուջեների կազմման և ծախսման գործընթացները վերանայելու նպատակով առաջարկներ մշակող հանձնաժողով,

3) առողջապահության բնագավառում բարձր տեխնոլոգիաների և Հայաստանի Հանրապետության առողջապահական միասնական տեղեկատվական համակարգի (էլ-առողջապահական համակարգ) ներդրման նպատակով առաջարկներ մշակող հանձնաժողով,

4) կլինիկական ուղեցույցների և պացիենտի վարման գործելակարգերի ներդրման նպատակով առաջարկներ մշակող հանձնաժողով:

2.Հաստատել՝ սույն հրամանի 1-ին կետով ստեղծված հանձնաժողովների անհատական կազմերը՝ համաձայն հավելվածներ N N 1-ի, 2-ի, 3-ի, 4-ի:

3.Սույն հրամանի 1-ին կետով ստեղծված հանձնաժողովների նախագահներին՝ յուրաքանչյուրն իր մասով.

1) անհրաժեշտության դեպքում՝

ա.առաջարկություններ ներկայացնել հանձնաժողովների անհատական կազմերը համալրելու նպատակով,

բ.հանձնաժողովների աշխատանքներին ներգրավել նախարարության աշխատակազմի և նախարարության համակարգում գործող կազմակերպությունների և հիմնարկի աշխատակիցներին,

2) երկամսյա ժամկետում ներկայացնել վերլուծություն՝ հետևյալ կառուցվածքով,

ա. նկարագրական մաս (ներկա իրավիճակ, հատկացվող միջոցներ, աշխատանքների, գործառույթների շրջանակ),

բ. ոլորտում գրանցված արդյունքներ, դրանց համեմատական վերլուծություն հնարավոր պլանային ցուցանիշների հետ,

գ. ոլորտի վերափոխման, արդիականացման նպատակահարմարության հիմնավորում,

դ. վերափոխումների, արդիականացման կամ նոր մոտեցումներ ներդնելու առաջարկներ՝ համապատասխան ֆինանսական և կազմակերպական կարիքների գնահատմամբ:

ԼԵՎՈՆ ԱԼԹՈՒՆՅԱՆ

Հավելված N3

ՀՀ առողջապահության նախարարի 2016 թվականի հոկտեմբերի 5 -ի թիվ 3024 - Ա հրամանի

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄ

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ (ԷԼ- ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ) ՆԵՐԴՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ ՄՇԱԿՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

1. Վարդան Գևորգյան	Նախագահ (համաձայնությամբ)
2. Արման Մելքոնյան	ՀՀ առողջապահության նախարարի գլխավոր խորհրդական
3. Արմեն Փարսադանյան	ՀՀ առողջապահության նախարարության բարձր տեխնոլոգիաների գծով խորհրդական